

13. 07. 2020 թ.

ք. Գյումրի

ՀՀ ոստիկանության Շիրակի ՄՎ

ՈՐՈՇՈՒՄ Թիվ 657

**ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿՈՒՄԱՅՐԻԻ ԲԱԺՆԻ
ԹԻՎ 121 ՈՐՈՇՈՒՄԸ ՎԵՐԱՆԱՅԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Ես՝ ՀՀ ոստիկանության Շիրակի մարզային վարչության պետ, ոստիկանության գնդապետ՝ Սասուն Ժորայի Աբաղյանս, վերանայելով ՀՀ ոստիկանության Կումայրիի բաժնի պետի կողմից **09. 04. 2020 թ.** կայացված թիվ **121** որոշումը, պարզեցի, որ.

Շիրակի մարզ, Հայկավան, 1 փողոց, 4 տան բնակիչ՝ Վարդան Մուշեղի Մարտիրոսյանը

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 182.3-րդ հոդվածի 10-րդ մասի հատկանիշներով ենթարկվել է վարչական պատասխանատվության: Վերջինիս նկատմամբ նշանակվել է տուգանք 100.000 ՀՀ դրամի չափով:

Հիմք ընդունելով «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» 2020 թվականի մայիսի 19-ի թիվ ՀՕ-265-Ն օրենքի 2-րդ հոդվածը և առաջնորդվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 67-րդ հոդվածով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի


Վերանայել Վարդան Մուշեղի Մարտիրոսյանի նկատմամբ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 182.3-րդ հոդվածի 10-րդ մասով կիրառված տույժը՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով նշանակված տուգանքը, փոխարենը կիրառելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 182.3-րդ հոդվածի 1.1-ին մասով նախատեսված տույժը՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկի չափով տուգանքը (10.000 ՀՀ դրամ):

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 287-րդ հոդվածի համաձայն՝ վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմնի կայացրած վարչական իրավախախտման վերաբերյալ որոշումը կարող է գանգադարկվել (բողոքարկվել) սույն օրենսգրքով սահմանված վարչական կարգով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքով սահմանված դատական կարգով:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 288 հոդվածով սահմանված կարգով վարչական իրավախախտման վերաբերյալ գործի որոշման դեմ գանգադար կարող է տրվել որոշումը սույն օրենսգրքի 283-րդ հոդվածով սահմանված կարգով հանձնելու (հանձնված համարվելու) օրվանից հետո՝ երեսուն օրվա ընթացքում:

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ,
ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԳԼԴԱՊԵՏ՝

Կ.Տ.



Ս. Ժ. ԱԲԱԴՅԱՆ